



Զահրատ

Մահագրական

Օգոստոսի արեւին տակ ու հովուն տակ հիւսիսի
Շոգեմակոյկ մը նստած
Հաճի Լեւոնը գնաց

Եւ անոնք որ ծովափէն
Ծովն ու ծովուն փրփուրները դիտեցին
Խօսք մէկ ըրած խորհեցան
Կարգը մեզի քիչ մը եւս մօտեցաւ

Հաճի Լեւոնը տարին
Ամէն ինչ էր բայց ամէն ինչ ըլլալէն ալ ատելի
Իր դարի մօտ տարիներուն հաշիով
Մեր բոլորին երաշխիքն էր մահուան դէմ

Մինչդեռ հիմա կարգը մեզի քիչ մը եւս մօտեցաւ

Մէկ քահանայ չորս մահակիր դագաղ մ'անշունչ փայտի պէս
Շոգեմակոյկ մը դրին
Ու ծովն ի վար նաւարկելէն Հաճի Լեւոնը տարին

Մինչ անոնք որ տեսան լացին չլացին
Զգացին թէ կարգը իրենց քիչ մը եւս մօտեցաւ
Օգոստոսի արեւին տակ ու հովուն տակ հիւսիսի